

ԳԵՂՐԱՍ ՄՈՅԱԹԵԱՆՑ

889

№ 6.

ՀԱՅՐԵՆԻ ԱՒԵՐԱԿՆԵՐԸ

(Ճամապահնության ազուրով թիւնի և յուղական աշխատանքներ)՝



0.1.Հ.Բ.0.Ա.Դ.Բ.0.901.

Տաղավար Յ. Գ. Ասթուածակի

1912

910.4(47.925)

15-87



Գ.Օ. 4 (47.325) ՊԵՏՐՈՍ ՄՈՃՈՒԵԱՆՑ

5-87

№ 6.

ար.

19 NOV 2011

10 NOV 2011

ՀԱՅՐԵՆԻ ԱԽԵՐԱԿՆԵՐԸ

(Ճանապարհորդական սպառութիւններ եւ յուժեր).



ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ
Տպարան Յ. Գ. Սահոյեանցի

1912

04 JUL 2013

10024

ԱՐՏԱՏՊԻԱՆ.

„Բանասէր“ „Բազմավէլպ“ „Ընկեր“ և „Սուրբանդակ“ պարբերական հրատարակութիւններից:

Ահերսկների Սիրաչար

ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ԹՈՐՈՍ ԹՈՐՈՄԱՆԵԱՆԻՆ
ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՆԻՔԻ.



3605-51

卷之三

ԱԻԵՐԱԿՆԵՐԻ ՄԷԶ

1.

Այնտեղ թագաւորում է լոռութիւնը, ապահով և
ահաւո՞ր լոռութիւնը: Սաբսափից ահաբեկւած մի վայր
է նա... ուրիշները՝ վշտի և արցունքի հայրենիք են
անւանում նրան: Այնտեղ այժմ մարդիկ չեն ապ-
րում. չեն ապրում և անասուններ: Տարաբաղդ վայ-
րը նման է մի գերեզմանատան առանց գիտակների:
Այս, այնտեղ ժամանակն ինքն է, որ իջել է գերեզ-
ման և մարդու սրտի ու մտքի գործերն են միայն,
որ բարձրանում են հոգակոյաների տակից տխուր ու
յուսահատ, միենոյն ժամանակ վեհ ու հսկայ:

Օդը այնտեղ թանձր է, խիստ թանձր. դարեր
առաջ ապրող ու մեռնող մարդու շնչի ծանրութիւնն
է, որ այսօր խեղդում է այցելուին: Դարեր առաջ
տանջւող ու հառաջող մարդու հոգու բողոքն է, որ
այսօր շնչում է այնտեղ և հասնում մեր ականջին
մերթ մեղմ ու յուսակառը, մերթ լի զայրոյթով և
առնելութեամբ:

Տարօրինակ բան է լոռութիւնը: Խօսքն ունի մի
միտք, մի արտայայտութիւն, իսկ հազարաւոր են
նրա խոհերն ու արթնացրած մաքերը:

Անէծք դէպի մարդկութիւնը... ահա թէ ամենից առաջ լինչ է արտայայտում այդ սպանիչ լութիւնը: Այս, անէծք, գառն և յուսահատական անէծք... Անէծք դէպի նրանց, որոնք կանգնեցրին քաղաքակրթութեան անխւը, որոնք պատուհասներ դարձան մարդկային առաջադիմութեան գործին և արեան ու արցունքի գանգւածներով ողողեցին այն ճանապարհները, որոնց վերայից անցան իրանք:

Ո՛, յուսահատական յիշողութիւններ, որ դարերի խորքերից մեզ համելով, մեր հոգին լցնում էք ծանըր և ահաւոր մտքերով, և ստիպում էք մեզ սարսափել այն անողոք ճակատագրից, որը վիճակւած էք մարդ արարածին...

Դիշեր էք, երբ ես դուրս գալով իմ աղքատ խուզից, կանգնեցի այդ սպաւոր փայրի արիւնու հողի վերայ: Գիշեր, լուսնիկայ գիշեր: Երկինքը այնահեղ խաղաղ ու ընդարձակ էք ինչպէս համատարած ծովը. բայց լուսնի շողքերը այդ օրը փայլում էին մի մեղմ ու դարով լուսով: Ես չեմ յիշում թէ երբ և է տեսած լինէի լուսնին այդքան մելամաղձու, այդքան տխուր, ինչպէս ես նրան տեսայ աւերակների հայրենիքում: Ինչի՞ նա այդքան տխուր, ևս չգիտեմ, միայն նրա լոյսի տակ ես նշմարեցի մի քանի հսկայական շէնքեր, որոնք նման էին գերեզմանից գուրս շպրտած ու այլանուակւած դիմակների: Աստւած իմ, մեր մաքի համար որքան սարսափելի է այն լուսաւորութիւնը, որը լոյս աշխարհ է հանում մարդու մթին ու խաւար գործերը:

Լոյտը ոչ մի անդամ ինձ համար այնքան վրդովիցնող ու այլայլող չէր եղել, ինչպէս նա եղաւ այսօր: Ես տեսայ այն մութ ստերները, որոնք սկ ուրւականների նման տարածւում էին հսկայական բարձրութիւնների կշտին: Հաճելի էր ինձ դիտել այդ մութ պատկերներին. նրանք սկ էին ինչպէս դարերի ճակատագիրը. այնտեղից, ինչպէս անհուն ժամանակների խորքերից, ինձ չէր պատկերանում արեան և արցունքի մութ ժանգը... Խաւարը մի սարսափի ունի, բայց աւելի ահաւոր ու սարսափելի է երբ լուսուորում ենք նրան և տեսնում ենք դէպքերն ու իրողութիւններն իրանց ամբողջ մերկութեամբ:

Ես մի քանի քայլ առաջ գնացի դէպի այդ հըսկայ շէնքերից մէկը. աղօտ շողքերի մէջ իմ առջև պատկերացաւ մի կարմիր պատկեր... Կարծես արիւնով էին ներկել այդ հսկայական շէնքը: «Քրիստոնէի տաճար է նա», շշնջեց իմ մէջ մի անսովոր զգացում: Այս, այլքան անշուք, այլպէս վիրաւոր ու մինակ, ոտքից մինչեւ գլուխ արիւնով ներկւած Քրիստոնէայի տաճարը միայն կարող է լինել:

Ես սխալ չէի... մօտեցայ ալեւոր շէնքին. մի ահաւոր շշուկ, մի խոր տնքոց հասաւ իմ ականջին. ես սարսափեցի... լայն բացած աչքերով ներս դիտեցի այն ձեղքւածքներից, որ բացւել էին նրա հսկայական մարմնի վերայ: Այստեղ, այն լուսթեան և մթութեան մէջ ես տեսայ սարսափը իր ամբողջ այլանդակութեամբ, տեսայ խաւարը իր բոլոր զարհու-

ըանըով։ Քրիստոնէի տաճարը ամայի էր, քարուքանդ, աւերակ։

ԱՌ, ինչի՞ համար այդքան սարսափեցնող, ճնշող և գաժան էր «սիրոյ և գթութեան» քարոզների վայրը։ Զի՞ որ այստեղ երգւել ու փառաբանւել է միայն Մեծ Մարդասէրը։ Հի՞ որ նրա ամայի և քարուքանդ պատերը թրջւել են միայն զղջման արցունքներով և վերջապէս նա է, որ անընդհատ բարձրացրել է մարդ արարածին դէպի կատարելագործութիւն, դէպի արդար հակումները... Եւ սակայն հինաւուրց տաճարը այսօր նման էր իր Հիմնադրին, նրա պէս հալածւած նրա պէս մենակ ու անոք...»

Դարձոր յիշողութիւններն ու տանջանքները իմ հոգին լցրին մի խորին ու ահաւոր թախիծով, ես չուզեցայ այլ ևս կանգնիլ այդ տիսոր տեսարանի մօտ։ Քայլերս ուղղեցի դէպի մի հսկայ բարձրութիւն, որ կարծես ձգտում էր համրել երկնքի աստղերը։ Տարածութիւնը, որի վերայից անցկացայ ես, ծածկւած էր իրար վերայ անհոգ կերպով թափաւած քարերից, որոնց արանքներից առատ կերպով աճել ու բարձրացել էին վայրի բոյսերն ու մացառները։ Այդ շնչքը մի բարձր աշտարակ էր, որ կանգնած էր մենակ ու անոք, ժամանակը, ոյժի և զոյութեան այդ անհաշտ թշնամին, իր սոսկալի կնիքն էր դրել հսկայ շինւածքի վերայ։ Հպարտ չէր երկնքի աստղերը համրող հսկան, նա նման էր տարիների ծանրութիւնից կոացած ալեորին։

Եւ հինաւուրց շնչքը նոյն ինքն մարդն էր,

նրա պէս մենակը, նրա պէս անընկեր, որ սակայն անընդհատ վեր է բարձրացրել իր վլուխը, ձգտելով համել ով զիտէ, մինչեւ ուր...

Սակայն նա էլ այդ տարաբաղդ արարածի նման կանգ է առել իր կէս ճանապարհի վերայ, երբ վրայ է հասել ժամանակը իր անողոք պահանջներով։

Գոյութեան անգութ կռւի իսկական պատկերն էր աշտարակը։ Ամեն մեծութիւն արհամարող, ամեն ոյժ ծալլող ահաւոր ոյժն էր, որ կոիւ էր յայտարարել հինաւուրց հսկայի դէմ։ Յաղթողը, ի հարկէ այդ ահաւոր ոյժն էր — ժամանակը, և սակայն երբ է յաղթւել նա, ինչն է յարատել մնացել և ինչը չէ անյայտանալու վաղը։ Մարդը, ժամանակի դէմ մարտընչող այդ անզօր փոշին ստեղծեց «յաւիտենականութեան գաղափարը» առանց չափելու իր ուժը, իր հսկացողութեան սահմանները... Եւ սակայն վաղ ուշ վրայ է հասնելու մեր վերջին ժամը, երբ մեր խարխուլ հոգին, մեծացած մենակ, անվերջ հալածւած ու տանջւած, կը կանգնի երերուն ժաքերով ինչպէս հինաւուրց աշտարակը, սպասելով թէ երբ կը հնչէ իր վերջին վայրկեանը։

Ունայնութեան այդ ահաւոր կոթողը, իր արթնացրած մտքերով կարծես մի քիչ խաղաղութիւն էր ներշնչել յաւիտենականութիւն երազող իմ հոգուն, երբ իմ ուշաղրութիւնը զբաւեց մի անորոշ աղաղակ, մի խորին մրմռնջ... Այդ լուս ու ահաւոր զատարկութեան մէջ, արնաներկ վայրի վերայ լուսող անորոշ ձայնը նման էր հնուռ տարածութեան վերայից

հասնող յուղարկաւորութեան սրտառուչ՝ երգերին մ՛, ինչպիսի զարհուրելի մաքեր շրջապատեցին ինձ: «Ունայնութիւն» աղաղակող կոթողը կարծես դիտմամբ էր բարձրացել այդ մշտառե և սգաւոր աղաղակների միանւագ ողբերգի մէջ: Այստեղ մէկը չէր ուղում բաժանվել իր սիրած կեանքից, իր յաւիտենական երազնիքից, իր անցած ու զնացած տիտոր ու բաղդաւոր ժամերից. բայց այնահեղ, մի խոր անգունդի միջից հասնում է յուղարկաւորութեան ողբի ձայնը... յիշեցնելու համար, թէ ահա ժրտեղ է մարդու սրտի ու մտքի վերջնական կետը: ԱՌ, այդ տըխուր հառաջանքները միթէ հերիք չէին որ մարդու հոգին մի անդուսպ ատելութեամբ լցւէր դէպի բնութեան անդութ օրէնքը:

Յուղարկաւորութեան երգերի ձայն, բայց նվ էր յուղարկաւորը: Յուղարկաւորը մեռնող քաղաքակըրթութիւնն էր, անցնող դարերի ողին... Մարդկութեան և ժամանակի համար ծանր էր այդ կորուսաը, ուստի նա ծանր և հանդիսաւոր էր կատարում այդ յուղարկաւորութիւնը, ճնշող, տանջող և զարհուրիչ մեղեղիներով:

Անընդհատ մրմուրջներով հասնում էին ինձ այդ միանւագ հառաջանքի ձայները և իմ հոգին ճնշում անպատմելի յոյզերով: Ես մի քանի քայլ առաջ գնացի և վար նայեցի հինաւուրց կերտածքի բացւածքներից:

Մի խոր ու ահաւոր անդունդ բացւեց իմ աչքերի առջե, որի միջից անվերջ ու գառն հառաջով հի-

նաւուրց զետոն էր հոսում ազմկայոյզ ու փրփրալից: Գեաը նման էր մի լայն ու սպիտակ ժապաւենի, որ ոլորապտոյտ քարշ էր տւած այդ սե ու խոր անգունդի յատակում: Նա աղմկում, ողբում էր մի տիտոր հառաջով և վրդովում էր շրջակայքի խորին հանդսառութիւնը: Նա էր, որ երգում էր յուղարկաւորութեան տիտոր մեղեղին, և իր միանւագ ձայներով բերում էր այնքան խորհրդաւոր յիշատակներ հեռաւոր գարերի խորքերից: Լուսնի լոյսի տակ պատղում էին վճիտ ալիքները, որ փրփրալից թըռչում էին երար վերայից և վաղում առաջ, միշտ առաջ, առանց գիտենալու թէ մեր...

Սյովէս է եղել գարերից ի վեր մարդը, այդպէս էին նրա սրտի թռիչքները... թռչել զէպի առաջ, անկանգ ու անվերշ, բայց թէ ուր համենելու համար — նվ զիտէ:

Դիշերային այդ դատարկութեան մէջ, այդ արիւնոտ վայրի մեռելային ու խաղաղ գրկում ևս լըսում էի զիտի յուսակառուք հառաջանքը, լուսնի ցոլքերի տակ փայլող փրփուրնէրի նւազումը և նորից հեռանում գարերի խորքը, նորից յիշում արիւնոտ անցեալը: ԱՌ, Աստւած իմ, ևս ինձ զգում էի երկու անդունդների մէջ. — Անդունդ ժամանակի ձեռքով դոյցած, անդանդ բնութեան անդուսպ ու յանդուզն հաճոյքից տռաջացած: Երկուսն էլ ախոնւր, երկուսն էլ ահաւոր էին, որ զիշերային այդ զարհուրելի ժամին ճնշելով իմ սիրտն ու հոգին, կարում էին իմ շունչը և արագացնում սրտիս բարախը:

Սակայն ինձ քաղցր էր հոգու այդ ճնշումը, սրաի այդ արագ ու արտասառվոր քաբախը, ես երկար ժամանակ չեմ կարողանում հեռացնել իմ հայեցչը ալեոր զետի սպիտակափայլ ալիքներից և չեմ ուզում անջատել այդ կախարդական պատկերից:

Իսկ դու որքան քաղցր էր երգում ու աղմկում ով զետ, երբ այս բարձրութեան վերայից, ժամանակի կմախքի փախարէն, քեզ էր զիտում ուրախ զըրդիներով արբեցած սիրալ:

Ես հեռացայ այդ ճնշող տեսարանից, ինքս ինձ զգացի լուսնի լոյսի տակ մենակ, մի քարուքանոց տարածութեան վերայից: Բայց իմ ականջից չեմ կը տրում զիտի նւազած զոռումը: Ես զլխակոր ու ճնշւած, քայլերս ուղղեցի դէպի իմ բնակութեան վայրը... շը ջակայքի տարօրինակ և սարսափեցնող լուսութիւնն ու դատարկութիւնը իմ սիրալ լցրին մի անսովոր զգացմունքով:

Ոչ մի ձայն չեմ լսում. ոչ մի աղաղակ. կարծես բնութիւնն ինքն էլ այստեղ մարդու հետ գերեզման է իջել: Իսկ ինչ են այն սե ու մթին կէտերը, որ իրարից հեռու բարձրանում են: Այս սպաւոր տարածութեան վերայից, հարցը ինքս ինձ. «անցած փառքի վկաներն են», պատասխանեց ինձ ահաւոր լուսութիւնը: «Այստեղ էր, որ զարեր առաջ խըրոխում էին փառքն ու մեծութիւնը, շարունակեց նա, այստեղ սիրոյ և գթութեան համար սահմանւած վայր էր. այն ոլորտապոյտ կամարներն ազատ էին

ինչպէս երկնքի վերայից սաւառնող արծիւը. այս սգաւոր բարձրութիւնները մի ժամանակ զարդարւած էին ինչպէս երկնքի յաւերժահարսները և օրհնութեան երգը լսում էր աւելի վեհ ու քաղցր քան հրեշտակների մեղեղին»:

Փառքի և մեծութեան աւերակների վերայից ես անցայ և հասայ իմ աղքատիկ խուզին: Լուսնի լոյսի տակ, աչքս զցած իմ ծանօթ տաճարի վերայից, ես սկսեցի խորհել... խորհել զառն յոյզերով, խորհել յուսահատ ու տխուր, մերթ անիծելով ժամանակը, մերթ սուզելով զարերի խորքը և ձգտելով բաց անել ու կարդալ պատմութեան արիւնոտ էջերը...

||.

Այստեղ, հեռաւոր լեռներից վչող բարակ քամին, անցնում էր մի արասասովոր շուկով. նա իր հետ բերում էր մի սարսափ, մի տարօրինակ շշունչ: Զարթող օրը չգարթեցրեց ոչ մի կենդանի արարած և ոչ մի ձայն չեկաւ վրդովելու այն խորհրդաւոր լուսութիւնն ու դատարկութիւնը, որի միջից իր անդուր վայունով անցնում էր վաղորդեան քամին: Ինձ թւեց, թէ այստեղ ամեն մի բոյս, ամեն մի մացառ, նոյն խակ կարմիր ու գորշ քարերն անզամ ձայնակցում էին քամու անզուր երգին և օդը լցնում մի անորոշ ու խուլ վայունով: Դա մի ճնշող ու կախարդական երգ էր, որ ճնչում էր այնքան յուսահատ, այնքան տխուր ու դառն: Ինձ թւեց, թէ աշխարհն

այնտեղ հեկեկում էր: Ես այնտեղ առաջին անգամ լսեցի բնութեան ձայնը, առաջին անգամ լսեցի նրա լսցն ու հեկեկանքը: Ո՛, միթէ միայն մարդը չէ, որ ստեղծւած է այդքան անոք ու անպաշտպան, խեղճ ու մենակ: միթէ միայն նրա կեանքի ուղին չէ, որ ծածկւած է լացով ու արցունքով...

Երջակայքի լերկ ու ամայի լեռների գագաթները կանգնած էին յաւիտենական սպաւորների նման, որոնց հոգու վէրքերն ամոռելու համար չի կարեկցում անողոք ժամանակի քարացած սիրտը: Նրանք իրանց սկ ու մոայլ գագաթներով յիշեցնում էին զառամեալ ծերունու ճակատի կնճիռները, որոնց վերայ կարդացւում են ժամանակի պատմութիւնը և տանջանքներով լի սրտի բոլորը:

Այն հակայ լեռների քացւածքից նկատւում էր մի սկ տարածութիւն... նա մոայլ էր ու անծայր ինչպէս յաւիտենականութիւնը... նրա պէս սկ էր, նրա պէս ահաւոր, որտեղից մեղ չի հասնում ոչ մի սիրելի ձայն և որի մէջ զլորւածը յաւիտեան կորչում է մեղ համար:

Վայրը դատարկ էր... ոչ ոք չգիտէր նրա բնակիչների տեղը: Նա դատարկ էր և անհիւրասէր... Շատ ժամանակ չէր անցել երբ ես այնտեղ, նրանցից մէկում, թողել էի իմ բարեկամ չղիկներին: Նրանք այժմ չկային, դատարկ էր և նրանց տիւրակը. Ենչ, միթէ նրանց համար էլ անհիւրասէր էր այդ տարաբաղդ վայրը:

Ես կամաց կամաց առաջ գնացի գէպի մի ամա-

յի բարձրութիւն, որ գտնուում էր արիւնաներկ վայրի արևմտեան ծայրում: Քամին մեղմացրել էր իր վայունը, մացառները օրօրւում էին գանգաղ և յոգնած, ինչպէս մահամերձ ալեսորը, իսկ շրջակայքի բարձրութիւնները կանգնել էին արեկի ճառագայթների տակ տիւր ու գլխակոր: Կարծես նրանց համար չէր բարձրացել այդ յաւիտենական լուսատուն և այլ ևս նրանց սառած ու չորացած մարմնին ոչ ոք, ոչ ոք չպէտք է բերէր կեանք ու ջերմութիւն:

Բարձրութեան վերայ կառուցւած շէնքը մի հրակայ էր, մի վիրաւոր և արնաքամ հսկայ. հսկայական էր նա և նրա լացը: Այն չորս լերկ ու տիւրագին պատերը նման էին մի գագաղի. ինձ թւեց թէ ես իջնում եմ մի խոր ու մութ զերեզման, որտեղ հանգչեցրել են իմ սիրելի արարածը: Սյա, գերեզման էր նա... զերեզման, ուր թաղւած էին հողի տակ փառքն ու մհծութիւնը: Բայց որքմն սպաւոր էր քամու, այդ յաւիտենական յուղարկաւորի անողոք երգը, որը ևս լսում էի այդ չորս ամայի պատերի մէջ: Հարթ պատերից կախ ընկած մացառները մի արտասովոր վայուն էին արձակում և տարութերւելով օդի մէջ, մահւան դալուկն էին յիշեցնում ինձ: Հոգիս մի անսովոր ճնշում զգաց և սիրտս կարծես ուզում էր կանդ առնել...

Ո՛, Աստւած իմ, շշնջացի ես... իմ շշնջի արձագանքը մի արտասովոր ձայնով հսչեց այդ դատարկութեան մէջ: Ես քարշ զցած իմ պլուխը, յուսահատ ինչպէս այդ ամայի ձեռակերտը, միացի

կանգնած երկար ու երկար: Այս, ևս էլ այդ ժամին
նրա պէս անզօր էի, նրա պէս վիրաւոր, ևս լսում
էի մի ներքին ձայն, որ գալիս էր մի հեռու տարա-
ծութիւնից, ինչպէս ապաւոր քամին: Իմ ներքին
ձայնն էլ այդ քամու նման ունէր մի վայուն, մի
դառնադին ու անորոշ աղաղակ: Ես դում էի իմ մէջ
անսովոր զգացմունքների մի կոփւ ..

Բայց Աստւած իմ, զոնէ մի ձայն գար վրդրվե-
լու այդ սպանիչ լուռթիւնը, զոնէ մի աղմուկ հաս-
նէր ինձ և խլացնէր այդ անզունգներից լսող սար-
սափելի աղմուկը: Ինչի՞ այնտեղ ոչ մի շնչաւոր չը-
կար, ինչի՞ չկային անդուր մողէն ու չար բորենին,
որ շատ անգամ են սողացել ու անցել այն ամայի
քարերի ճեղքերի մէջ, առանց վախենալու, որ երբ և
է մէկը կարող է վրդրվել իրանց հանգիստը: Այնտեղ
ես չտեսայ նաև աւերակների մշտատե այցելուին —
անդուր բռին, որի խոսքու ձայնը այնքան անգամ
արձագանք է գտել այդ խորհրդաւոր լուռթեան մէջ:

Ես դուրս եկայ այդ սկաւոր վայրից, արեգակի
ճառապայթները փայլում էին մի խաւար ու դժոյն
լոյսով: Թայլերս ակամայից ուղղեցի զէսի սեպաճե
ժայռերի մէջ բացւած խորխորատը: Մի աներևոյթ զօ-
րութիւն ինձ մղում էր զէսի այդ մութ անզունդը:
Ես նորից կանգ առայ հակայական ձորի ափին, որի
յատակից փրփրալով անցնում էր գարեւոր գետը:
Արեգակի ճառապայթների տակ նրա ալիքները այն-
քան խորհրդաւոր և տանջող չէին, ինչպէս լուսնի
ցոլքերի տակ: Մացաների և թափւած քարերի

միջից քայլերս ուղղեցի զէսի ներքեւ... Շատ չան-
ցած, ես փրփրացող զետի ափին կանգնած դիտում
էի շուրջաւ: Գետի յաւիտենական աղմուկը խլացնում
էր իմ վրդովւած հոգու բողոքը. ես երկար ու երկար
չէի ուղում հեռանալ և կանգնած լսում էի ահաւոր
ալիքների ներդաշնակ բայց յանդուգն ու սպաւոր
երգը:

Ինչի՞ ասես, որ չգարթեցրեց իմ սրտի մէջ այդ
ալեսոր զետի խորհրդաւոր համերլը: Ո՞հ, Աստւած
իմ, ինչի՞ այսքան ատրօրինակ է աղմկում այս գե-
տը. Ինչ վայուն է, ինչ սարսափ է որ տիրում է
այս օդի մէջ: Ինչի՞ քարածայոի ափերին այնքան
սպաւոր և տիրուր են կանգնած այն քարուքանդ շէն-
քերը: Նրանց համար չի լալիս արդեօք հինաւուրց
ողբերգուն: Նրանց աւանդ թողած անէծքը չէ ար-
դեօք, որ նա կարգում է անկանդ, անընդհատ:

Ցիշողութիւններն ինչքան էլ անջատէին ինձ
մտքերից, բայց ձայնը նորից գալիս, նորից խղում
էր իմ մտքի թելը և նորից սեղմում էր իմ սիրտը:
Քիչ հեռու ես տեսայ մի ալիք, որ շարունակ պառյա
էր տալիս մի ցցւած ժայռի շուրջ և «ո՞հ ու վայ» էր
աղաղակում: մի քիչ այն կողմ, մի քանիսը իրար
վերայից թաւալեկով «ո՞հւա, շուտ» էին կոչում...
ուրիշները հառաջում էին վիրաւորի նման, մնացած-
ները անքում էին անյոյս ընկածի պէս: իսկ նրանց
բոլորի ձայները միասին խառնւած առաջացնում էր
մի ահաւոր վայուն, մի մըմունջ ու շաչիւն, մի ա-
ղաղակ ու կոծ...



Գետի ընթացքի հետ ևս մի քանի քայլ առաջ գնացի, այստեղ սև ու մամոռա ժայռի կըծքին ևս կպած տեսայ մի փոքրիկ ձեռակերտ: Ամայի էր նա, կիսաքանդ ու անշուք, Քարաժայոյին յենւած աւերակը նման էր մօր կըծքից պինդ կպած այն երեխային, որին աշխատում է խլել անողորմ դահիճը: Նա կարծես կուզէր ապրել դեռ ևս երկար ապրել... Բայց ժամանակը, այդ մաշող ու ոչնչացնող ոյժը դրել էր նրա վերայ իր անողոք կնիքը և ընկած էր նրան տարիների բեռան տակ:

Այն, կար ժամանակ, երբ նա մատաղ ու թարմ էր իրեն աւանդ թողած գաղափարի նման: Խոկ այժմ նոյնքան հին է ու անզօր ինչպէս այդ գաղափարը: Նրա զլիից էլ եկան ու անցան տանջանքներ, սուր ու հուր, աւեր ու կրակ... Այդ փոքրիկ աւերակը, այսօր մարդկութեան բարերարի աւանդած հզօր գաղափարի փոքրիկ արտացոլումն է..., Ո՛, ժամանակի անդութ խաղ, էլ ինչի՞ համար էին այն կրակն ու աւերը, կախաղաների սիմերը ներկող այն կարմիր արիւնը, այն ահաւոր ու զարհուրելի հայեացքները, որ զցւում էին մարդկանց վերայ անգութ դահճի կացնի տակից: Դահճի զոհ էր նաև ինքը, նախկին քրիստոնեայի այդ ամայի վայրը: Այնտեղ դեռ ևս կանգուն է զոհի սեղանը, բայց չկայ վառւող մոմը, անյալտացել է պաշտամունքի սպասաւորը: Եւ աւերակը նման էր մի մարդու, որի բարի յիշատակը իր մահւանից յետոյ, զեռ ևս շարունակում է մաքառել դարերի հետ:

Գերեզմանը ինձ համար այնքան սարսափելի երբէք չէ եղել: Ինչքան այդ կիսաւեր վայրը... Ինձ թւեց, թէ այս աւերակը մի դիակ էր, որ իր սպիտակ պատաճքի միջից յանկարծ մեկնում է իր ձեռքերը և լայն բացած աչքերով ծաղրում է կեանքը: Իսկ այն մամոռտած չորս պատերի մէջ աւելի խուլ և ահաւոր էր հնչում սպաւոր զետը... Ինչքան զարեր այդ տարօրինակ հնչիւնը շարունակ հանգիստ ու մոռացում է պարզել մարդկային սրախն: Բայց ինչի՞, Աստւած իմ, ինձ, միայն ինձ էր վիճակւած քարանալ, ճնշւիլ և խեղդւիլ այդ ձայներով և նըրանց ներդաշնակ ողբերդի մէջ զգալ գերեզմանի խոնաւութիւնը...

Շուտով ևս դուրս եկայ մենակեացի սպաւոր խուզից: Կրկար չկարողացայ շնչել այն թանձր ողը, որ լցւած է սպաւորի հեկեկանքով և որի մէջ դեռ ևս զգացւում էր արեան և արցունքի խեղդող գոլորշին...

Խոր ձորի յատակով քայլերս ուղղեցի դէպի առաջ... իմ աչքերի առջև պատկերացաւ մի նոր ու անօրինակ տեսարան: Ալեսը զետը այնտեղ կանգնած էր սպաւորի նման, ալիքները չէին խփում ափի ժայռելին և զետը իր աչքերը յառած դիտում էր շրջակայքի աւերակներին լուռ ու հանդարտ:

Ինչի՞ էր կանգնել սպաւոր զետը: Նա մըտեղ էր թաղցնում այն ալիքների որոտն ու աղմուկը, որ քիչ վերև սպասափ էր պատճառում նայողին:

Ո՛, Աստւած իմ, ինչ ճնշող ու յուսահատ մըտ-

Քեր արթնացրեց իմ մէջ այդ սգաւոր գիտը... նա կանգ առած ժամանակի խոկական պատկերը չէր արդեօք... Այսաեղ, այս սգաւոր հողի վերայ, այս լուս ու ամայի երկնքի տակ կանգ է առել ամեն բան: Կանգ է առել ժամանակը, կանգնած է և քաղաքակրթութեան անիւր:

Այդ գերեզմանական լուսութեան մէջ ես չկարողացայ երկար կանգնել. թողի հինաւուրց գիտը, թողի անդունդը իր ուրուապտոյա վնացքներով և բարձրացայ քարաժայոի վերայ:

«Բարենաւ մնամ, ով գետ», ասացի ես և առաջ գնացի դէպի իմ խուզը:

Այդ օրը ես առաջին անգամ տեսայ թէ ցերեկւայ արեգակը ի՞նչ է շնորհում մեռած զիակին... Այս, նա նպաստում է նրա քայլքայման, նրա ժամ առաջ ոչնչացման: Այդպէս էր ասում ինձ այն այրող շոգը, որ տաքացնում էր մեռած վայրը...

Օդի մէջ ես տեսնում էի մի թանձր փոշի, որը թափանցիկ վարագոյրի նման իր յետեն էր սքողում մեռած վայրի կործանւած շէնքերը: Ցիր ու ցան թափւած քարերը տաքացել էին արևի շողքերի տակ և արձակում էին մի այրող տապ: Ո՛, որքան խեղդող և ճնշող էր այդ տօթը... որքան սարսափ, որքան մեծ ահարեկում կար այդ կանգ առած օդի մէջ: Բայց քանի՛ քանի՛ գարեր այդպէս եկել ու անցել է այն լոյսի աղբիւրը, այն կեանքի և ջերմութեան պարզեցը և միայն սարսափ ու ահ է տարածել այդ սգաւոր հողի վերայ: Ինչ, միթէ այդ սգաւոր վայ-

ը նրա խորթ զաւակն էր... կամ ով անիծեց նըրանն... մի աներեւոյթ զօրութիւն, որ ուրախանում ու հրճում է մարդկային ցեղին հասած տանջանք-ներով:

Ո՞վ զիտէ...

Սակայն այդ ահն ու սարսափը, այդ ճնշումն ու յուսահատութիւնը անզօր էին հանդիսանում հեռացնել ինձ այդ ահարեկ վայրերից: Մի աներեւոյթ զօրութիւն կապել, կաշկանդել էր ինձ: Ես չէի ուզում հեռանալ այդ արեան և արցունքի գանգւածներից: Ես ուզում էի փարւել այն գորշ կարմրագոյն քարերին և զգւել ու թրջել նրանց իմ արցունքներով, որոնք այնքան առատ ու ստեղ յայտնում էին իմ դալուկ աչքերի մէջ: Եւ սակայն քանի՛ քանիսները այդպէս թրջել են իրանց արցունքներով այդ սգաւոր վայրի քարն ու հողը: Քանի՛ քանիսների հառաչանքի ողբն ու կոծը մի տիսուր արձագանք է տւել ու նորից հանգչել այդ ամայացած վայրերի խորխուրաների մէջ...

Ո՛, ես այդ բոպէին անզօր էի, ընկճւած, խեղճ: Իմ հառաչանքը մարում էր շրթունքներիս մէջ և իմ ներքին կրակը հանգնելու համար ես ոչ մի հնարչի գտնում: Մերթ ընդ մերթ մի խորին անքոց դուրս թռչելով իմ սրտի խորքից, մի խուլ ու դառն արձագանք էր գտնում լացող երկրի աւերակների մէջ:

Դարեկոր յիշատակները մէկ մէկից յետոյ գալիս ու անցնում էին իմ յիշողութեան միջից, և աւելաց-

նում այն աճն ու սարսափը, որ այդ լողին համակել ու կաշկանգել էին ինձ:

Իմ հոգու ձնշումն ու ահարեկումը աւելի սաստկացաւ, սիրաս կարծես ուզում էր դուրս թռչել կրծքիցս, երբ ես կանգ առայ մի հսկայ շինւածքի վայր թափւած բեկորների մօտ: Մարդկային ճարտարապետութիւնը իրար ամուր էր սեղմել քարերի բեկորները և վայր թափւած հսկան նման էր մի վիրաւորի, որ ստացած վէրքերի տանջանքներից չանգում է խոպան գետինը, Այն բեկորներն արձակում էին մի յուսահատ տնքոց, մի դառն ու անողոք հառաջանք: Նրանց ճեղքերից երեացող լոյսերը նման էին մահամերձ մարդու աղեխարշ հայեցքներին, որ ընկնելով անցորդի վերայ, գութ են աղերսում նրանից: Ո՞, խեղճ հսկայ, շուտով կը հնչէ և քո վերջին ժամը, խեղ քո քայքայւած դիակի սըրբազան փոշին ժամանակին ու աշխարհը թող տանին ու հասցնեն նրանց, որոնց համար թանգ էիր դու կենդանի ժամանակ և որոնց համար դառն էր քո կորուստը...

Ես չկարողացայ երկար ողբալ կործանւած հըսկայի վերայ: Վիշտն էլ իր սահմանն ու քանակն ունի. ամեն մի զգացմունք իր որոշ տարածութիւնն ունի մարդկային հոգու լայնածաւալ շինւածքի մէջ: Եւ կան ըստիներ, երբ վիշտը կըդադարի վիշտ լինելուց, երբ հոգու ամբողջ տարածութիւնը անզօր կըլինի տեղաւորացնել ահաւոր տանջանքը, և թմրած ու անզօր մարդկային միտքը մի լուռ հանդիսաւես

կըմնայ այնտեղ, չկարողանալով արտայայտել ցաւի ծանրութիւնը, վշտի կսկիծը... Այդպէս էի ես ինքս:

Լուռ ու գլխակոր ես դիտում էի այն թանձր փոշին, որ բարձրանում էր իմ կառքի անիւների տակից՝ անտեսանելի գարձնում ինձ շրջակայքը: Ես ոչինչ չէի տեսնում, միայն ինքնամոռացութեան մէջ մերթ ընդ մերթ իմ ականջին էր հասնում չորս երիվարների ոտքերի տոփիւնը, որ թռչելով տանում ու անջատում էին ինձ այն սգաւոր վայրերից... Ես այն ժամանակ, թաց աչքերով մի անզամ էլ բարձրացայ իմ կառքի վերայ, յետ նայեցի դէպի աւերակների հայրենիքը և խոր հառաջանքով արտասանեցի՝ «Մնաս բարեմւ, իմ խեղճ ու սգաւոր Ասիր»:

„Բանակը“ № 1—2/1904 թ.



ԱՅՈՏ ՈՂՈՐՄԱՆ ԹԱԳԱԽՈՐ ՀԱՅՈՑ

Ո՞վ լուակեաց լուսին և երկնային պսպղուն աստուեր, դուք որ ձեր յաւիտենական հայեացքներով դիտում էք աշխարհը, լուսաւորում էք մութ խորխորատներ, խաղ էք անում խոր ծովիրի շաշող ալիքների հետ և կեանք ու ոգի էք ներշնչում լքւած սրգաւորին, ասացէք, միթէ կապոյտ երկնքի տակ կայ մի աւելի սգաւոր վայր, քան այս մահւան հովիտը, որի վերայ ընկած հառաջում են երկու հայկական կիսակործան տաճարներ լիւռ ու սգաւոր, մենակ ու տիստւր...

Դուք, ո՞վ վերջալոյսի ոսկեզօծ ամպեր, դուք որ այնքան վեճ էք ու թովիչ, դուք որ հրդեհում էք ահեղ ովկիանոսի ալիքները և խաղ էք անում լիռնային հպարտ դագաթների հետ, դուք որ կտրում ու անցնում էք հեռու, հեռու տարածութիւններ, արդեօք ձեր ոսկեզօծ ճառագայթները լուսաւորել են երբ և է մի աւելի խեղճ ու սգաւոր վայր, քան այս լուակեաց հովիտը...

Եւ դուք, երեկոյեան խորհրդաւոր քամիներ, դուք որ արտասում էք բաց երկնքի տակ ընկած դիակի վերայ, դուք որ մահւան յաւիտենական ողբն էք երգում անձայն աւերակների լուռ պատերի մէջ,

և սիրում էք հանգստանալ ու նւազել լեռնային խորունկ քարանձաւներում, արդեօք տեսել էք մի աւելի ցաւագար ու սգաւոր վայր, քան այս ահարեկ հովիտը իր աւերակների կոյտերով...

Իսկ գեղադէմ լուսինն ու փայլվլող աստղերը, վերջալոյսի շողերով հրդեհւած ամպերն ու հանդարաքամիները՝ եկան ու անցան մէկիկ մէկիկ ու անզօր հանդիսացան ամոքելու իմ վշտացած սիրտը, որը չէր կարող ազատ շունչ քաշել այնտեղ, այն աւերակների լուռ պատերի մէջ, ուր օդը ծանրացել էր մամոռտ քարերի արձակած հառաչանքներից և ուր զգացւում էր գերեզմանի խոնաւութիւնը:

Այս, գերեզման էր այն սգաւոր հովիտը, որի մէջ թաղւած էին յօշտուած մարմիններով այն կիսակործան աւերակները: Քրիստոնէական տաճարներ են նրանք, ուր երեմն հնչւել է ապաշխարութեան հեկեկանքը և ազատանքի մորմոքը, սակայն այսօր կորցրած փառք ու վայելչութիւն՝ նրանք ընկած են գետնի վերայ և հառաջում ու հեկեկում են հաղար ու մի վէրքերի ցաւերով:

Ամառային արեի այրող ճառագայթների տակ հեռում էին այդ լուռ աւերակները քարշ զցած իրանց սգաւոր զլուխները, իսկ նրանց կիսակործան շէնքերի մէջ կիսդանիներն էին ապաստան գտել՝ ցերեկւայ այրող տապից պաշտպանելու համար. Սակայն ինչի՞ էր այդպէս ճնշում ու տանջում ինձ այդ սգաւոր հովիտը՝ իր երկու աւերակների քարաբլուրներով: Զէ՞ որ այդ հինաւուրց աւերակները շատ բա-

ներ ունէին ինձ ասելու՝ անցեալ փառքի. օրերից,
երբ երկնքից ուրախ էր անցնում գեղադէմ լուսինը
և այսօրւայ նման երեկոյեան քամին չէր գալիս ու
աղմկում իր սպաւոր պատերի մէջ և չէր մորմոքում
ինչպէս մահամերձ մարդու վերջին շնչառութիւն...
Եւ սակայն այնտեղ, այն ամայի վայրում, ամեն մի
չորացած բոյս ու մացառ, ամեն մի քարի կտոր
խօսում էր ու լալիս, ողբում ու հեկեկում, և ես ի
զուր յուսացի լսել այնտեղ ուրախացնող մի յուր,
յուսագրող մի ձայն:

Եւ գու այդքան անգութ ես եղել, ով սկ ճակա-
տագիր, որ անցած ու գնացած տասնեակ դարերի
խորերից ոչ մի ուրախացնող բան չունիս մեղ ասե-
լու, և նահատակ ժողովրդի սպաւոր արձանների այ-
ցելուն՝ այսօր լոկ պիտի անիծէ ու անիծէ քեզ...

* *

Այնտեղ, աւերակների հիւսիսային կողմից յա-
ւիտենական հառաջանքներով գետն էր հոսում ու
վրդովում շրջապատի խորհրդաւոր լուսիւնը, Նրա
նւաղած գոռումը իմ սիրտը լցրեց մի անսովոր ըզ-
գացմունքով, և իմ սիրտը գործ էր գնում մի գեր-
մարդկային ճիգ, որ օդ գանի և չխեղդւի: Կուրծքս
սեղմում էր հետզհետէ, և ես կամենալով գէթ մի
րոպէ հեռացնել իմ աչքի առջեկց այդ սպաւոր պատ-
կերը՝ քայլերս ուղղեցի դէպի հառաջող գետը, որ
պայտ տալով անյայտանում էր բարձրաբերձ կիր-

ձերի խորքերում: Մահւան մի անսովոր սուգ ու ողբ
էր արձակում հառաջող գետը: Նրա ալիքների աղ-
մուկը կատաղի չէր, ինչպէս առիւծի մռնչոցը, և ա-
հաւոր ու սարսացնող չէր՝ վագրի ոռնոցի նման, այլ
նա նւաղած էր ու յուսահատ, ինչպէս մի արնաքամ
որս, որ հառաջում է՝ իրան պատառ-պատառ անողի
անողորմ ճանկերի մէջ:

Ես կանգ առայ գետի ափին և լսեցի նրա թախ-
ծագին հեկեկանքը, որը նման էր մի վշտացած մօր
մորմոքների, երբ նա իր սիրասուն զաւակի արնոտ
դիակի մօտ նստած, ողբում է նրա կորուսարը: Եւ
գետը թաւագլոր կարում ու անցնում էր իր յաւի-
տենական ուղին, և գնալով կորչում էր անյայտ
տարածութիւնների մէջ իր մշտական նւաղութերով:
Իսկ այդ տանջանքի բոպէին ես լուսմ էի նաև իմ
սրտի աղմուկը, որ իր միալար բարախներով կըտ-
րում ու անցնում էր մարդկային կեանքի արիւնոտ
ճանապարհը: Երկուն էլ պանդուխտներ էին, եր-
կուսն էլ օտարներ, — այս արնաներկ աշխարհի ժա-
մանակաւոր հիւրերը: Եւ սակայն ինչի՞ իմ սրտի ու
հոգու և այս շրջապատի մէջ որւած էր մի անքննե-
մի կապ, ինչի՞ ես ինձ զգացի այդ վշտաւոր բնու-
թեան մի անբաժան մասնիկը, և ինչի՞ իմ հոգին
անդրադարձնում էր անցած ու դալիք տանջանքների
հարաջն ու սարսափը:

Ո՛, դարերի ցաւեր ու հառաջանքներ, ես ձեր
հարազատ զաւակն եմ և ձեր անբաժան մասնիկը,
ով մշտահառաչ գետ և արեան հովիտ...

Գետի նւազած գոռումը քանի գնում այնքան աւելի էր սաստկանում և միախառնւելով իմ սրտի արտաստվոր բարախի հետ՝ առաջ էր բերում մի յուսահատ ժխոր, մի տարօրինակ վայում ու կոծ:

Մի խոր հառաջանքով իմ մնաս բարեն ասացի հայրենի գետին, և գլխակոր ու տիտուր իմ քայլերն ուղղեցի գէպի սգաւոր աւերակները, որոնք մի անսովոր թափով ինձ քաշում էին գէպի իրանց ցաւադար գիրշը, ինչպէս մի վշտոտ մայր, որ իր գերագոյն տանջանքի ժամերին անգամ չի մոռանում իր սիրասուն զաւակին:

Նայում եմ չորս կողմու, ականջ եմ զնում անվերջ, սակայն չկայ ու չեմ լսում ոչ մի ձայն, ոչ մի աղաղակ, բացի հառաջող գետի յուսահատ կոծը, նայում եմ շուրջս թափած հայրենի տաճարների քարուքանդ բեկորներին և նորից սուլում զարերի խորքը, նորից յիշում անվերջ տանջանքների արիւնոտ շղթան:

Կան աւերակներ, որոնք իրանց քարուքանդ զրութեան մէջ անգամ վեհ են, ահեղ ու հսկայ, տեսել եմ այնպիսիները, որոնք աւելի խորհրդաւոր են ու խոհուն՝ քան իրանց կանգուն ժամանակ: Սակայն նա, որի մօտ այսօր հառաջում ու կոծում է էմ սիրուը, նա արթնացնում է իմ սրտի մէջ միայն ու միայն խեղճութիւն, լաց, անտէրութիւն: Ո՛, խեղճ տաճարներ, գուցէ այդ է պատճառը, որ երկնքից թռչուններն անգամ չեն կալիս հանգիստ զանելու

ձեր կիսաւեր կամարների տակ և իրանց երգերով վրդովելու ձեր մեռելային լսութիւնը:

Մի ինչ որ ցաւալի և տիտուր բան էին ասում ինձ այդ լուռ աւերակները, որ տիրահառաչ հեկեկանքների նման գալիս հասնում էր իմ ականջին. իսկ այդ ձայների աղղեցութեան տակ՝ իմ հոգին զգում էր մի ճնշում, մի սարսափ և ես քարշ գցած իմ գլուխը երկար ու երկար լսում էի այդ տարօրինակ մրմունջն ու հեկեկանքը:

Այդ վիրաւոր ու ջախջախւած հսկաներն յանկարծ ինձ պատկերանում էին՝ կանգուն ու խրոխտ. ևս ահսնում էի վիստացող մի ահաւոր ամրոխ, հանգիստաւոր գնացքների մի հսկայական շոխնդ, և այդ այն ժամանակն էր, երբ մահւան հովիտը գեռ ևս կենդանի էր, արեան լճեր չկային այդ աւերակների շուրջը, իսկ աղմկող գետը մնյոյս վիրաւորի նման չէր արձակում մի անվերջ հառաչ:

Սակայն չէր անցնում մի քանի ըսպէ, երբ ևս այդ խոր զատարկութեան միջից, որպէս մի ահաւոր անդունդի խորքից՝ լսում էի տիրահառաչ, ծանր ու երկար մեղեղիներ, որոնք միայն «ախ» ու «վայ» էին արձակում: Տարօրինակ հառաջանքներ, որ մի անսովոր սարսուսով լցրիք իմ հոգին:

— «Այդպէս է լացել ու հառաջել անցած սերունդը, այդպէս է անյոյս հեկեկացել նա այս սկպատերի մէջ»: Դա սկ լսութիւնն էր, որ խօսեց խսւարի միջից՝ ինձ ուղղելով իր դաժան հայեացքը:

— «Սակայն ինչի՞ էր նա հառաջում ու լալիս,

երբ կարող էր խրովստ լինել ու յանդուգն», ասացի հս, «երբ կարող էր մեռնել առանց պրտասւելու և ընկնել հպարտ քրքիջներով»:

— «Ես սև պատերի մէջ փառարանւել է միայն հեղութիւնը, ներումն ու սէրը»...

— «Ո՛, հերիք է, պատասխանեցի հս...

Եւ ե՞րբ էր այդպէս. այն ժամանակ՝ երբ մարդ դազանի գերագոյն հաճոյքը իր նմանին յօշտաելու, պատառ պատառ անելու մէջ էր կայանում... Անարդ ու ստոր արարածներ, որ ամօթ ու արատ հանդիսացաք դարերի և մարդկութեան ճակատին. լպէրշ և անդութ հոգիներ, որ ձեզ միշտ խորթ ու անհականալի մնաց պիրոյ և եղայրութեան աստ- ւածային քարոզը...

* *

Ենաեղ, աւերակների արևմտեան կողմում, մոխրագոյն ըլլակի վերայ գտնուում էր հայկական գիւղը — ծերունի Խօշավանքը: Տարօրինակ պատ- կեր... իրար վերայ թափւած խուզերն աւելի անշուք ու խղճուկ էին, քան կենդանիների որջերը: Մարդիկ վտիտ ու դանդաղ տնց էին կենուում նեղ ու անշուք անցքերից, և իրանց անհետաքը իր հայեացքները վայրկենապէս դարձնում էին գէպի օտար այցելուն: Երկու հպարտ տարուց աւելի է, որ այդ մարդկանց նախահայրերը բնակութիւն են հաստատել այդ բարձրավանդակի վերայ, հառաչող գետի ափին, և

սակայն այսքան երկար ժամանակ նրանց քաղաքա- կլթական կեանքի անիւը երբէք չէ շարժուել դէպի առաջ: Ինչի՞ նա, այդ ժողովներին էր առաջադիմե- լու անընդունակ, թէ մի այլ անգութ ձեռք է խո- չընդուտ հանդիսացել նրա աստիճանաբար զարգաց- ման, նրա առաջադիմութեան...

— «Ոչ, մենք չենք մեղաւորը, մենք քաղաքա- կլթութեան սիրահարներ ենք, մենք առաջադիմու- թեան կարապետներ էինք, — աղադակեցին ինձ այդ անշուք խուզերի միջից վեր բարձրացող հայկական չին տաճարի երկու կաթուղիկէները — սակայն մենք ստիպւած եղանք կանգ առնել և յանուն մեր սիրած զաղափարի՝ մեր արիւնով լւալ այս խուզերն ու մահւան հովիտը... Տես, ոսկորներից են շինւած այն բլուրները, իսկ այն լիրան կուրծքը պատառող խոր- խորատից՝ արիւնն է միշտ վայր հոսել ջրվէժի նման»...

* *

Օրը մթնել էր, վերջալուսի ոսկեգոյն ճառագալթ- ները որպէս մի հսկայական հրդեհ հեռու արեւմուտ- քում վառուում էին կարմիր գոյնով և մի ահաւոր տեսք էին պարզեւում այն խորհրդաւոր երկնքին: Ստւերները կամաց-կամաց վար իջան լեռներից, և խորհրդաւոր խաւարը սկսեց իր սև վերարկուն տա- րածել այդ լուս տարածութեան և մահւան հովափ վերայ: Սիրաս լցւեց մի նոր զգացմունքով և ես

մոխրապատ բլրի վերայից, մեն մենակ իմ քայլերս նորից ուղղեցի դէպի մահւան հովիտը Եւ հասնելով այն սև աւերակներին, ես այնտեղ լսեցի խեղդող խաւարի լացը, որ հեծեծում էր իր անվերջ արցունքներով։ Այստեղ երբեմն-երբեմն գալիս ու կանգ էր առնում աստանդական քամին, աւերակների այդ մշտնջենական այցելուն, և իր կոծն ու վայիւնը խառնելով խեղդող խաւարի սրտաճմլիկ լացի հետ՝ արձակում էր մի թախծալի հառաչ, մի անօրինակ հեծեծանք, և ապա նւազում էր ու թուլանում ինչպէս մի վշտացած սգաւոր իր գերմարդկային տաննջանքների ազգեցութեան տակը։ Ես հաղիւ էի կարողանում շունչ քաշել և հառաչանքների մի երկար ու ցաւագար մեղեղի գուրս էր թռչում իմ կըրծքից և նւազում ու մարում էր այդ սգաւոր աւերակների սև պատերի մէջ...

ՍԵւ գիշեր»

Այնտեղ կարծես բնութիւնը չէր կարող նիրհել... ամեն մի բոյս, ամեն մի մացառ, խոռոչ ու քարեր՝ ձայն էին արձակում խաւարի մէջ և մի տարօրինակ շշուկով վրդովում էին այդ սգաւոր վայրերի քունը։ Սև լուսթիւնը մի խորհրդաւոր լիզու ունի, որ մատչելի է միայն նրանց՝ որոնց հոգին ցաւագար է, և սիրտը՝ վշտերի ծով... Իսկ նաև այդ ահաւոր լուսթիւնը, ժրտեղ կարող էր գտնել մի աւելի ցաւագար հոգի և վշտերի ծով գարձած մի սիրտ՝ քան այդ մահւան հովտում, հայկական այդ կործանւած տաճարների աւերակների մէջ։ Շատ բաներ ունին այն-

տեղ իրար ասելու խաւարն ու լուռթիւնը։ Նրանք մի տանձին սիրտվ ուշ գիշերին զալիս զտնում են իրար այդ աւերակների լուռ պատերի մէջ, և որպէս կարօտած սիրահարներ՝ գաղտագովի թագնուում են այն խոռոչների մէջ, և փսփսում են իրար ականջի ինչ որ տանը պատմութիւններ հեռւ-հեռու զորից, անցած ու գնացած ցաւոտ հոգիների անդարձան վէրքերից...

Եւ ես որպէս մի վիշերային ուրւական, որ լուռ թափառում է աստղերի ներքե, կանգնած այդ խոռոչների առջև՝ լսում էի գիշերաւյ կիսին ականջիս համեսող մի անորոշ շշունջ, լսում էի մի ծանր և յուսահատական հասաչ, որ մերթ ընդ մերթ արձակում էր այն ահաւոր լուսթիւնը՝ խաւարի պատմութիւնը լսելիս... Մի թաց խոնաւութիւն էր տիրում օդի մէջ, և ինձ թւեց թէ հեծեծող խաւարի արցունքն է դա, որ թրջում է աւերակ տաճարների քարերը։

Ահարեկւած այդ վշտաւոր հոգիների արձակած հասաչանքներից, ես իմ սրտի կոծը միացրի նրանց շշունջների հետ, և այդ վշտաւոր ներդաշնակութեան մէջ ըմբոնեցի սգաւոր հոգիների ամբողջ էութիւնը։ Ես այդ ժամանակ գգացի որ իմ հոգին մի աննշան հիւէ չէ, որ պիտի նւազի ու կորչի ցաւերի այս անհունութեան մէջ, այլ մի ահաւոր շանդ է, որ պիտի փայլատակէ խաւար անեղբութեան խորխորատներում և պիտի պատմէ ինձ նմաններին հոգու ցաւերից, սրտի տաճանքանքներից, որոնք այնքան վըշ-

տոտ են ու ցաւոտ և որոնք այնքան հասկանալի պիտի լինին այս տևերակների հարազատ զաւակների համար:

Մի սկ ու խորհրդաւոր գիշեր էր այն գիշերը, որ իր հսկայական թեսքը տարածել էր այդ աւերակների վերայ, նա կարծես կամենում էր որ խոր թաքցնէ բնութեան այդ վշտոտ զաւակի վշտոտ վէրքը, ինչպէս մի հպարտ տառապող, որ իր վէրքը խոր է թաքցնում իր հոգու խորքում չուզենալով որ որևէ մէկը թափանցէ այնտեղ և տեսնի սկ տանջանքը: Շրջապատի սկ լեռները քարշ էին գցել իրանց գըլուխները և խորհում էին ծանր ու հանդիսաւոր: Մութ ու սկ քարաժայուերը նման էին արցունքների, որ կախ էին ընկած հսկայ լեռների արտասւաթոր աչքերից: Խսկ այդ մութ ու մուայի մէջ, այդ համատարած խաւարի ծոցում միմիայն աւերակների շըշունջն էր, որ լսում էր այդ տառապանքի վայրում և որը գնալով հետզհետէ խեղդում ու քարացնում էր ինձ...

Քամին կամաց կամաց հանդարտւեց ու լոեց. ես ուրախացայ, որ այդ յաւիտենական այցելուն կտրեց իր տարօրինակ ողբը, խսկ այն մահւան հովտի վերայ գտնւած քարերն ու մացառները կտրեցին իրանց յուսահատ հեծեծանքը, որ լսում էր քաշու շառացի հետ:

Ես ժամեցայ քարարլուրներին, չողքցի նրանց առջն, իմ անզօր բազուկներով սեղմեցի նրանց իմ բարախող սրտին, և սկսեցի ողբալ ու հառաչել ինչ-

պէս մի սկաւոր մայր, որ պինդ սեղմելով կրծքին իր մեռած զաւակի դիակը, չի ուզում, չի կարողանում բաժանել նրանցից, եւ մթութեան մէջ, խաւարի այդ անհիւրասէր ծոցում ես լսեցի իմ սրտի խորին հեծեծանքը, որ տարածւում էր այդ սկաւոր պատերի մէջ և նւազում ու մարում էր այն ընթաւոր հառաչանքների նման, որոնցմով լիքն էր այդ քարացած օդն ու տարածութիւնը:

Խսկ աւերակներն իրանց կործանւած զմբէթներով տեսնում ու լսում էին այս ամենը, և չգիտէին ի՞նչ անել, ի՞նչպէս ամոքել իմ հոգու գերմարդկային վիշտը:

Յանկարծ գիշերային այդ խաղաղ ժամին քամին մի ուժգին թափով շառաչեց և իմ ականջին հասցրեց մի անսովոր զոռում. Դա գետի նւազած ձայնն էր, որ անցաւ մահւան հովտի միջից: Ո՛, ի՞նչպէս տարօրինակ հնչեց իմ ականջին այդ ձայնը. մի սարսուռ անցաւ իմ ամբողջ մարմնով, սիրտս զողաց ու գալարւեց իմ կրծքի մէջ, ինչպէս մի վիրաւոր զոհ, որ իր վերջին ոյժերն է հաւաքում իր վերայ յարձակող թշնամուն գիմազբելու համար:

Գետը նւաղեց, նօրից տիրեց նախկին լուութիւնը, բայց այդ զոռումը գեռ չէր հեռանում իմ ականջից, ինչպէս մի վշտահար պատմութիւն, որ հաւածական է դարձնում մարդկային սրտի հանգիստը: Եւ սարսափի ու խաւարի փափոցները, գետի նւազած զոռումը և սրտի ցաւագար ու վշտոտ բարախումն ու հառաչը խառնւելով իրար հետ՝ տարան

ինձ հեռաւոր դարերը, ոճիրներին և արեան դարերը... Իսկ այդ ցաւագար ըստէին յանկարծ իմ հոգին սկսեց գողալ յաւիտենական գիշերի դառն տարակումների առջև... Ինձ թւեց մի ըստէ որ բնութեան հիմնական օրէնքը կատարելազործութիւնն ու առաջադիմութիւնը չէ, այլ այնտեղ կայ մի ուրիշ հակադիր ոյժ, որ հակառակ է այս ամենին. Գուցէ այս էր պատճառը՝ որ իմ տառապած հոգին մի ըստէ սկսեց կասկածել իմ դաւանած գաղափարի ճշշմարտութեան մասին, և տիսնելով այդ անգութ ոյժի գործած աւերը, սկսեց տարակուսւիլ ու երերալ...

Այդ ժամանակ ես օգնութեան կանչեցի անապատի մարգարէներին, տառապեալ դարերի ընթացքում անցած ու գնացած գողափարների հապալու զինուրներին, անց կացայ կախաղանների տակից, տեսայ խարոյէների բոցը, մտայ մութ ու ահաւոր բանտերը, որոնք այնքան անթիւ էին ու անհամար և որոնք իրանց հալածական զրութեան մէջ անդամ այնքան վեճ էին ու աստւածային։ Եւ այդ ժամին ես զգացի այն առաւելութիւնը, որ կայ հալածւածի տիրահառաչ ու ցաւագար մըմունջների և յղիացած հոգիների դժոխային քրքիջների մէջ... Ո՛, ինչ կակած, որ քըքիջները մարելու են հետզհետէ, իսկ դարերի տէրը մնալու են տիսուր ու ցաւագար հառաջները։

Յոյզելն ու խոհերը ինձ տարան դէպի ինքնամուացութիւն, Տառապող հոգիների համար մի փր-

կարար սպեղանի է այդ ինքնամուացութիւնը: Մարդկային հոգին գուցէ ինքնն է դուրս քաշել անհռւնութեան խորքից այդ կարնատկե պատրանքը, ինքնն է որոնել ու գտել:

Եւ այսօր, հայրենի աւելքակների վիրաւոր խո-
ստչների վերայ նստած, առաւտուեան արշալոյսի
աղօտ ու տիտուր ճառագայթների տակ ես օրհնեցի
այդ ինքնամուացութիւնը։ Բայց կենդանութեան
ամեն մի նշոյլ որ զարթնում էր կապուտակ եր-
կնքի վերայ և կամ մահւան հոփափ մէջ, իմ հո-
գին լցոնում էր նոր յոյզերով, նոր տանջանքնե-
րով։ Զեն զարթնում ու կենդանանում նրանք, որոնք
մի ժամանակ կանգուն էին ու հպարտ, իսկ այսօր
անքում ու հառաջում են և մեռնող վերջալոյսի, և
գեղատեսիլ արշալոյսի հետ

իսկ տանջանքի ու յուսահատութեան այդ սոս-
կալի բոսէին մայր աւելակի սեւ ու լուս բացւած-
քից իր գլուխը նորից գուրս հանեց լոռութիւնը և
խաւարի միջից շնչաց.

բայի գրւածը՝ անխանամ թափւած-

Այստեղ, այս քարակոյտերի ամենալավ է գործը մէջ ես տեսայ մի մամուռապատ զամբարան, որի վերայ գրւած էր.

«Եւստ Ողորմած թագաւոր Հայոց»:

Խեղդւեց հառաջանքների անընդահատ ակմուկից...
«Աշու ողորմած»...

Հասկացմայ այժմ, թէ ինչի՞ էք դուք աւեր ու
կործանւած, ով հայրենի աւերակներ, և թէ ինչի՞
էք հառաջում ու ողբում այսպէս անվերջ ու անըն-
դահատ:

Թարեաւ մնաք:

„Բազմավէպ“ № 2/1906 թ.



ԶԻՄՐԹՆՈՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ

ԱՐՏԱՇԱՏԻ ԱԻԵՐԱԿՆԵՐԸ

Մենք չունինք մեր անցեալի պատմութիւնը,
մենք շատ քիչ բան գիտենք մեր անցեալ քաղաքա-
կրթական զարգացման մասին. չենք ուսումնասիրել
և չենք ճանաչում մեր երկիրը և մեր այժմեան սե-
րունդը, որի պապերը 3000 տարուց աւելի է, որ
յաջորդաբար ապրել են այս երկիրի վերայ, նման է
մի գաղթական տարրի, որ պատահմամբ հանգիստ է
գտել այս բարձրավանդակի վերայ: Եւ չնայելով որ
մենք այսօր համարում ենք տռաջաղէմ և քաղաքա-
կրթւած ազգ, սակայն չունինք այդ պատւին արժա-
նանալու գեթ ամենատարբական գիտելիքները:
Մեր չոր ու ցամաք տարեգրութիւնը իր մի քանի
խոշոր անձշառութիւններով մի մշտական արատ է
մեզ համար. մեր տեղազրութեան հեա մեր անձա-
նօթ լինելը մի մեծ յանցանք է, որ ծանրանում է
ազգային փառքի նախանձախնդիր բոլոր խորհողնե-
րի վերայ:

Հողի ու մոխրի տակն է մեր պատմութիւնը,
պէտք է բաց անել ու կարդալ պէտք է քրքրել և

ուսումնասիրել այդ պահւած դանձերը — ահա այսպէս ասացին ինձ այն հսկայական աւերակների կոյտերը, որ չնորհիւ ժրաշան Խաչիկ վարդապետի գանւեցան Վաղարշապատից չորս վերստ հեռաւորութեան վերայ, Արարատեան դաշտի կենտրոնում:

Շատ էի լսել ու կարդացել այս աւերակների և նրանց լոյս աշխարհ հանողի մասին, և ահա անցեալ տարւայ օգոստոսի 21-ին, վերջապէս վիճակւեց ինձ այցելել այդ հնագարեան սքանչելի յիշատակարանները և դիտելով նրանց միաժամանակ սքանչանալ ու ողբալ, ուրախանալ ու արտասւել:

Արարատեան դաշտի գեղեցիկ առաւտաներից մէկն էր, ջինջ ու մաքուր երկնակամարի վերայ չէր լողում ոչ մի ամպի կտոր, ողի մէջ երեմն խաղում էր մի բարակ զեփիւռ և մի առանձին հաճոյքով շոյում ու զովացնում էր ճանապահորդին: Մի հարթ ու գեղեցիկ խճուղու վերայից սրանում էր իմ կտորը, անցնելով կջմիածնի և շրջակայքի սրբազն վայրերի միջից: Վաղարշապատից հաղիւ չորս վերստ հեռացած իմ կառաքը գուրս եկաւ խճուղուց և դիմեց դէպի հաբաւ: Երկու ըսպէից յետոյ մենք կանգ առանք պատմական այն մեծ յիշատակարանի առջև, որին անւանում են Պարթնոց եկեղեցի:

Ամենից առաջ իմ աչքին ընկաւ ալեխառն դէմքով մի յաղթանդամ անձնաւորութիւն, որն իր կապոյտ ու անպանցած շապկով ու զոտիով յիշեցրեց ինձ առևտոց ամենամեծ բարոյագէտ փիլիսոփայ Տալստոյին: Այդ մարդը Խաչիկ վարդապետն էր, որ աշ-

խատեցնում էր մի քանի բանւորներ: Վարդապետը նկատելով ինձ և միւս ճանապարհորդներին շտապեց դէպի իր անշուռք խուցը, հագաւ իր վերակուն և վերագարձաւ մեղ մօտ և սիրալիր կերպով սեղմելով իմ և միւմների ձեռքերը, յայտնեց իր ովլինելը: Սյժմ ես տեսայ իմ առջև կանգնած բաւականին խոշոր գիմագդերով հայ հոգեսրականին արեւառ դէմքով, առողջ ու յաղթանդամ մարմնով և դէմքի դիւրեկան արտայայտութեամբ: Ինձ էջմիածնուում ասել էին, որ Խաչիկ վարդապետը դեռ իր աքսորավայրունն է և աւերակները մնացել են առանց հըսկող ու հովանաւորող ձեռքերի: Սակայն գտնելով նրան այստեղ, ես դգացի մի առանձին գոհունակութիւն և ուրախութիւն, որը չը ծածկեցի նրանից: Հայր Խաչիկը յայտնեց, որ երկու շաբաթ է ինչ վերագարձել է աքսորավայրից ուր տամն և մէկ երեկար ամիսներ, տանջւել է իր հայրենիքի և սիրելի աւերակների կարուով:

Ապա նա մեղ բարձրացրեց մի փոքրիկ բլրակի վերայ, որի վերայ գտնուում էին նրա պեղումների արդիւնքը — Զւարթնոց եկեղեցին և նրան կից նախկին Արտաշատ կտմ Արտեմիտ քաղաքի աւերակների մի փոքրիկ մասը: Կանգնելով այդ բարձրութեան վերայ ես ամենից առաջ մի հայեացք քցեցի արձակայ տարածութեան վերայ: Աքանչելի ու խորհրդաւոր ահսարան... Հեռուն, դէպի հիւսիս բարձրանում էր փեղեցիկ Արագածը իր երկու սպիտակափառ զարթներով, դէպի հարաւ կանդնած էր հսկայ Մագաթներով.

սիսը, իր կրտսէց եղրօր հետ միասին և որպէս մի գթառաա հայր իր հայեացքն էր սեեռել այդ շրջաւ-
կայքի վերայ և լուս ու մունջ դիտում ու դիտում
էր և տեսնում թէ ինչեր են կատարում իր աչքերի
առջև, ինչ ողբերգական տեսարանների է ականա-
տես լինում ինքը, Դէպի արևմուտք տարածում էր
Վաղարշապատը, ամբողջովին թաղւած ծառերի և
բուսականութեան մէջ, Բարձրաբերձ մայրիների ա-
րանքից երեսում էր կծմիածնի վանքի մեծ կաթու-
ղիկն, որ իր զաւակների նման անօգնական և ա-
րիւնոտ իր հայեացքն էր դարձրել դէպի Խաչիկ
վարդապետն ու նրա պեղումները, կարծես ասելու,
որ զգոյշ լինին և չմեղանչեն ճշմարտութեան դէմ.
Իսկ դէպի արևելք երկարաձգում էր դէպի Երեսն
տառող իւնուղին, որ կորչում էր դաշտավայրի հե-
ռաւոր ծայրերում: Տեսնելով այս բոլորը այցելուի
սրտից կամայ ակամայ թոշում է մի հառաչանք...
Ո՛, տարօրինակ զուգադիպութիւն: Միթէ այսօր էլ,
այս արիւնոտ օրերումն անգամ մեզ դարմանալի
պիտի թւի թէ ինչի՞ է աւերւել հին հայկական աթո-
ռանիստ չքնաղ Արտաշատը, ինչի՞ է կործանել ու
ընկդմւել հողի ու մոխրի զանգւածի մէջ, իր տակ
թաղելով հաղարաւոր սրբութիւններ և պաշտելի յի-
շատակներ: Անգութ ու սե՛ ճակատագիր, որ այս-
պէս անողոք կերպով հալածում ես մեզ դարերից ի
վեր և որպէս մի անմեղ ողջակէղ զոհում ես մեզ
մարդկութեան անբաւ մեղքերի համար: Եւ մինչ զեռ
իմ ոտքերի տակ տարածող գեղեցիկ ու սրբատաշ

քարակոյտները զուրս հանելով իրանց գլուխները
հողի ու մոխրի տակից լացով ու ողբով պատմում
են ինձ մեր արիւնոտ անցեալը, իսկ նոյն այս վայր-
կեանին իմ շշմած ականջներին է համառում հազարա-
ւոր վիրաւորննրի, այրւածների, և խողխողւածների
ուր վերաւորննրի, այրւածների, և խողխողւածների
վերջին ու ցաւագին հառաջանքները... Զէ որ հս
երեսնեան նահանգումն էի, Նախիջևանին մօտ...

Սակայն Խաչիկ վարդապետը չը թողեց ինձ եր-
կար ժամանակ անձնատուր լինել զառն ու անգութ
խոների: Առանց որևէ առաջարկութիւն նա ինքն
սկսեց պատմել իր աւերակների պատմութիւնը: Եւ
նա պատմեց երկար, ոգեսրւած մի խիստ հետաքր-
քիր պատմութիւն: Նա մի մոլեռանդ քարոզչի նման
դիւթում ու հրապուրում էր լողին և իր բացադրու-
թիւններն համեմում էր պատմական անթիւ ու ան-
համար փաստերով: Նա, ցոյց տալով զանազան ար-
ձանագրութիւններ, նկարներ և մեծ ու փոքր կերտ-
ւածքներ, յիշում էր Խորենացու, Ագաթանգէղոսի,
Ներսէս Շինողի, Անանիա Նարեկացու և այլոց
պատմութիւններից կտորներ, որոնք վերաբերվում
էին այդ արձանագրութիւններին և նկարներին:

Եւ մինչ զեռ Անիի աւերակների մէջ իմ հոգին
միշտ զգացել է մի սարսուն, մի ճնշում ու յուսա-
հատութիւն, մինչ զեռ իմ սիրտը լացել է այսակող
օդի մէջ տարածւած խուլ և տարօրինակ ողբի ու
աղաղակի անորս աղմուկների մէջ, և մինչ զեռ
նրա հսկայ պարիսպների մէջն անգամ հայութիւնն
երկացել է ինձ միշտ խեղճ ու հալածուած, մոլոր

ու անօգնական, սակայն այստեղ, այս մի քանի
հատ ու կտոր բեկորների մօտ կանգնած ես ինձ
դգում էի գոհ ու հպարտ, հոգիս ստուառում էր ա-
զատ ու անկաղանք, և հայ մարդն երևում էր ինձ
այստեղ առանց միստիքական խոհերի, բաձր բունած
գլխով, հպարտ ու անվախ... Եւ երբ Խաչիկ վարդա-
պեաը շարունակում էր իր հետաքրքիր պատմու-
թիւնը այդ ըոպէին իմ սիրաը չէր գալարւում մի
անօրինակ ցաւի ու ճնշման աղեցութեան տակ այլ
իմ միտքն էր միայն, որ բազմած երեակայութեան
թերի վերայ անցնում էր դարերի. միջից առանց
ցաւերի, առանց արտասուքի, մի հաճելի բերկրու-
թեամբ:

Պէտք է տեսնել այս աւերակները, պէտք է անձամբ դգալ այն տպաւորութիւնները, որ թողնում են նրանք հայ մարդու վերայ. պէտք է դիտել այն սրբազն վայրերը, որոնք մօտ երկու հաղար տարիներ տռաջ կանգուն էին և շէն և որոնք այսքան երկար ու ծիգ տարիներ մնացել են հողի ու մօխրի. տակ լուռ ու սպաւոր եւ ես անցնելով այդ աւերակների վերայից և տեսնելով այն ամենը, ինչ որ գոտնւած է մինչև այսօր, առանց մարդարէ լինելու պէտք է գուշակեմ, որ հայկական ապագայ Պոմպէյը ոչ թէ Անին է լինելու, այլ հողի տակ թագնւած հայկական այս հինաւորոց քաղաքը:

Մէկ մէկից քիչ հեռու հայր Խաչիկը ստքով խփում էր գետնին, ուր լսում էր մի դղբղիւն. դա ցոյց էր տալիս թէ այդ գետնի տակ գտնուում է մի շէնք,

մի աւելակ: Ըստարձակ տարածութեան վերայ ան-
թիւ անդամ փորձեց հայր Խաչիկը իր ուժեղ թա-
փով խփել գետնին և ամեն անդամ լուռում էր նոյն
խուլ շոխնզը, զետնի տակ մնացած սրբազան վայ-
րերի խուլ լողոքը... Մի ընդարձակ տարածութեան
վերայ, որը երկարաձգւում է Երասխ և Մհեմօր
գետերի բարձրավագնդակի վերայ, տեղ տեղ երկում
են փոքրիկ բլրակներ. Խաչիկ վարդապետի ասելով
այդ բլրակների տակ թաքնւած են հայկական եկե-
ղեցիներ և մեհեաններ:

Եւ այսպէս ընութիւնը մի քանի դարերի ընթացքում ամենայն խնամքով ծածկել է հոգի ու մոլորի թանձը շերտով հայկական այս սրբազն յիշատակարանները, որ մի օր երեան հանէ նրանց և մի լոյս սփռէ մեր անցեալ պատմութեան մի մեծ դարեցընի վերայ:

Խաչիկ վարդապետի պեղումների շնորհիւ գանւեած
ամենամեծ շէնքը Զւարթնոց եկեղեցու աւերակներն
են. Այդ եկեղեցին, որը պատմութեան ասելով օծել
է Ներսէս Շինող Կաթողիկոսը 654 թւին, մի հակա-
յական ճարտարապետական գործ է և յիշեցնում է
հրէական սինապոզաները. Մինչև այժմ՝ գոյութիւն
ունեցող հայկական եկեղեցիների մէջ նա միակն է
որ ունի կլոր ձև, որի բեմը մէջ տեղն է, իսկ աղօ-
թող բաղմութեան ճամար յատկացւած մասը շըջա-
պատռմ է բեմը բոլոր կողմերից*). Ես չեմ կամենում

⁴⁾ Σωτήριον παραπέμψεις της απόστολης επιστολής στην Κορινθίαν, η οποία περιγράφει την προστασία της Αγίας Εκκλησίας για την ιερή Εκκλησία της Κορινθίας.

այստեղ երկար կանգ առնել տաճարի ճարտարապետական բարձր արժանաւորութիւնների մասին. ինչքան յիշում եմ այս առթիւ յայտնի ճարտարապետութուս թորումահանանը մի ընդարձակ յօդւած է զետեղել «Մուլք» հանդիսի մէջ. սակայն և չեմ կարող յը յիշել որ նա մտքի մի վսեմ թոփչք է, հանճարի արտադրած մի աջող գործ, որը միայն փառք ու պարձանք կարող է հանդիսանալ այն դարձանին ու միջավայրին, որոնց մէջ նա, այդ հակայտկան ճարտարապետութիւնը ստացել է իր գոյութիւնը:

Աւերւած եկեղեցու մէջ գտնւած բոլոր մեծ ու փոքր նշանակութիւն ունեցող իրերը հայր Խաչիկը ամենայն խնամքով հաւաքել է մի առանձին տեղ եկեղեցու կշտին և ցոյց է տալիս ամեն մի այցելողին:

Այդաեղ դարսւած էին սիւների բեկորներ, ուրոնց վերայ տեղ տեղ մնացել է կրիայ կերտաւծքը զեղեցիկ և փայլուն գոյնով, Խաչիկ վարդապետը մեզ ցոյց տւեց մի քանի ստորագրութիւններ, որոնք զրել էին իւանց ձեռքերով մի քանի անւանի անձնաւորութիւններ և որոնք զանազան ժամանակներում այցելել էին այդ հինաւուրց տաճարը երբ դեռ կանգուն էր նա: Այդ ստորագրութիւնների մէջ կար յայտնի զօրավաբ թէսդորոս Ռշտունու և այլոց ձեռագիրները:

Եկեղեցու արեւելեան կողմում զանւում էր մի մեծ աւազան, որը կառուցւած է աւելի հին ժամանակներում և ուր ինչպէս երեսում է մկրտւել են հա-

սակաւոր հաւատացեալները քրիստոնէական առաջին դարերում:

Եկեղեցու արևմտեան կողմում հողի տակից դուրս է հանւած մի փոքրիկ մատուռի համարեայ ամբողջ շէնքը, որ Խաչիկ վարդապետի ասելով այն եկեղեցին է, որը կառուցել է Դրիգոր Լուսաւորիչը՝ այսինքն իսկական հջմիածինը:

Այդ մատուռին կից գանւում էր մի ուրիշ խոր հրդաւոր շէնք, կուպաշտական դարերի հայկական կրակատունը իր բոլոր կաղմով:

Խաչիկ վարդապետը ցոյց էր տալիս զանազան դռներ ու անցքեր և բացատրում թէ որտեղից էր դուրս գալիս մեծ քրմապետը, որտեղ էր հաւաքւում ամրոխ ամրոխը և որտեղից էին յայտնւում ժողովրդին Արամադդի երկնային պատգամները: Վառւած ու սեացած քարերը ցոյց էին տալիս, թէ իրօք, երկար, շատ երկար ժամանակ վառել է հուրը, մեր կանց զարդարութիւնը այդ այլ առաջնորդութիւնը այդ ուղարմելի տառւածը:

Կրակատան չորս պատերի մէջ, քարեայ հանցների առջև իմ հոգին զզաց մի սարսուո, մի արտասովոր զող: Անցեալի հազարաւոր պատկերներ, պայտածառ ու աղօտ գոյներով եկան ու մնացան իմ յիշութեան առջեկց: Շատ մութ կետէր ունի մեր անցնութեան պատմութիւնը, ահա այդ մութ կետերն են ցեղալի պատմութիւնը, ահա այդ մութ կետերն են որ այնքան յոյզեր և թոփչքներ են զարթեցնում եւ այնքան յոյզեր և թոփչքներ են զարթեցնում եւ այսպող հոգիների մէջ և աւելի խորհրդաւոր ու հերազող հոգիների մէջ և աւելի խորհրդաւոր ու իրերը... Եւ այժմ տաքրիր դարձնում գէպքերն ու իրերը...

ճակատագրի մի անսպասելի խաղով հողի և մոխրի կոյտերի տակից դուրս հանուած այդ աւերակ սրբավայրը ինձ աւելի շատ բանիք էր տառամ, քան առել էր ինձ մինչև այդ օրը միշտը էլատիկ պատմագիրների հատորների շարքը:

Հայր Խաչիկը հաւատացնում էր ինձ, որ Դրիգոր Խուսաւորչին վերապրած մատուի կշտին է գանուում նաև նրա բնակարանը և թէ ինքը շուտով պիտի սկսէ կատարել նրա պետութերը:

Կրտսէատան և մատուի արեմուեան կողմում գտնուում է մի կործանւած ապարանքի հսկայական շնչիք գեղեցիկ աւերակները, որոնց մէջ իբրև գլուխ զործոց բարձրանում է մի սիւնապարզ դահլիճի պատերի առաջին շարքերի ու սիւների սրբատաշ քարերը, դրւած պատւանդանների վերայ, Թահլիճին կից երեսք է այն տեղը, ուր բարձրացել է պատպամախօսը յայտարելու ժողովրդին կամ միուպեանների կամքը և կամ կրօնական խրաններն ու քարոզը, սակայն յայտնի չէ, թէ այդ սըանչիք շինութիւնները մի արքայական ապարանքի մնացորդներ են, թէ հայոց կաթուղիկունների մի գեղեցիկ դիւնատունը եւ ապա մի շարք մեծ ու փոքր շինութիւնների աւերակներ շըջազատում են այդ գեղեցիկ կոթողները և ցոյց տալիս ու պարզաբանում անցած դարերի նիստ ու կացի վերաբերեալ շատ ու շատ աեղեկութիւններ:

Հայր Խաչիկը եկեղեցու աւերակների արեմուեան կողմում շինել էր մի Ժամանակաւոր մուղէյ, ուր

հաւաքել էր ամենայն խնամքով ժողոված իրերն ու առարկաները և գարսել էր ապակէ փեղկեր ունեցող պահարանների մէջ, Այդ իրերի մէջ աչքի էր ընկնում մի մեծ և գեղեցիկ կարաս, մնացած ներսէս Շինող կաթուղիկոսի ժամանակներից, մեծ ու փոքր յաղճապակեայ ու կաւէ անօթներ, մի կտոր հաստ և կանաչաւուն ապակի հապցրած փայտէ շըջանակի մէջ և այլ հազար ու մի նշանաւոր իրեր:

Այս ամենը ցոյց տալուց յիտոյ Խաչիկ վարդապետը դառնութեամբ նկատեց, որ իր բացակայութեան ժամանակ էջմիածնի վանքի միաբանութիւնը շատ անփոյթ կերպով է վերաբերել դէպի այդ թանկագին յլշատակարանները և մինչև իսկ կամեցել են ոչնչացնել ու աւերել ամեն բան:

Խայտառակ իրողութիւն... հերիք չէ, որ այդ ձրիակերների խումբը առանձնացած փարթում խըցերի մէջ չի ուզում և չի կամենում հետաքրքրւել արտաքին աշխարհով, չի ուզում որևէ է բանով պիտանի նառնալ ընդհանուրին և բացի այս, նրանք իրանց հոգու ամբողջ թոյնն են թափումնրա վերայ, որը համարձակութիւն ունեցաւ նոր մտքի առաջին շինուքն ասել: Միթէ սա բարոյական անկման և մըտաւոր սնանկութեան միակ ապացոյցը չէ...

Սակայն անհուն գարերից ի վեր հչ մի կիրք և հչ մի թոյն չէ կարողացել մահւան ու ոչնչութեան ենթարկել այն սրբազն գաղափարները, որոնց քառողիներն ու մարգարէներն ունեցել են իրենց հետողեկութիւններ:

նացու ոսկորների կտորները գուցէ այսօր էլ հին
Արտաշատ քաղաքի պարիսպների տակից հոսող թա-
սաղ գետի աւազների մէջ դեռ ևս մնում են քարա-
ցած, սակայն նրա սրբազնն աճիւնը ջուրը թափող
դատարկապորտների թոյնն ու մաղձը՝ մի մազի
չափ անգամ չէ կարողացել նսեմացնել մեծ մարդու
բարոյական մեծ պատկերը:

Ի վերջոյ Զւարբնոց եկեղեցու աւերակների
կշտին կանդնեցրած էր ժեռ քարի վերայ գրած
խալտիական այն արձանագրութիւնը, որը կարդա-
ցել է պ. Կ. Բասմաջեանը և որի մի քանի տողերի
մէջ ամփոփվում է այդ անհետք կորած ազգի մի
հետաքրքիր և անյայտացած պատմութիւնը:

Այս ամենը ցոյց տալուց յետոյ հայր Խաչիկը
ցոյց տւեց նաև իր աշխատանքի մի այլ արդիւնքը:
Այժմեանից իսկ կամենալով զարդարել իր առանց
այն էլ զարդարուն աւերակների քաղաքը, նա այդ
աւերակներին կից զաշտավայրի մի ընդարձակ մա-
սի վերայ տնկել է զանազան պտղատու ծառեր, շի-
նել է մարգեր և նրանց միջից անցկացրել է մի առ-
ւակ, որը կտրելով այդ ընդարձակ տարածութիւնը՝
աջ ու ձախ ոռոգում է բերբի գաշտը:

Կէս օրւան արեն սկսում էր այրել ինձ. ես զգա-
ցի որ շատ յոգնեցի և յոգնեցրի Խաչիկ վարդապե-
տին, ուստի շտապեցի նրան տալ իմ հրաժեշտի ող-
ջոյնը և մի անգամ էլ անցնելով Անահատի և Ապողո-
նեան մեհեաններն իրանց տակը թաքցնող աւերակնե-

րի վերայից դոհ և ուրախ հեռացայ դէպի եջ-
միածին:

„Ընկեր“ № 26/1906



ՄԵԿ ՕՐ ԱՆԻՌՈՒՄ

Մէկ անգամ էլ մեզ վիճակւեց տեսնել Բաղրատունեաց չընադ մայրաքաղաքի հինաւուրց աւերակները, մի անգամ էլ մեզ վիճակւեց տեսնել արևելքի այդ փառապանծ թագուհուն, որի գովքն ու հմայքը օր-օրի վրայ բազմացնում է իր սիրահարների թիւը:

Գուցէ հարիւր ու մի երրորդ անգամ մեզ վիճակւեց նորից տեսնել Անին և ինչպէս մի այրւող սիրահար նորից զզալ իր բաղուկների մէջ իր գեղանի սիրուհու սրտի բարախն ու մարմնի ջերմութիւնը և նորից հմայւել նրա սիրոյ անուշ տանջանքներով:

Այսպէս է Անին բոլոր նրանց համար, որոնք կարող են հասկանալ նրա փառապանծութիւնը, նրա վեհութիւնը, նրա հմայքը...

Այսպէս է Անին այն բոլորի համար, որոնք չեն հրապուրւած իրենց սիրուհու լոկ արտաքին տեսքով, այլ սիրում են նրանց հոգին, ներքինը, էականը, ինչ որ ծածկւած է մարդկային տեսողութիւնից ու ինչ որ մատչելի է որոնող ու փնտրող հոգու աչքերին...

Սակայն չնորհիւ այն հանգամանքի, որ մենք

այս անգամ միացել էինք մի բոլորովին կենսուրախ և օտար ընկերութիւն հետ, այս անգամ մենք չըգուացինք մեր գեղատեսիլ սիրուհու այցի ամբողջ քաքցրութիւնն ու վնճռութիւնը և մեր հոգին չզգաց նախկին տարիների սրտառմաները, որոնց այնքան խոր ու յախուռն մենք երգել ու ողբացել ենք իր ժամանակին:

Յուլիսեան պարզ ու տօթ օրերից մէկն էր, երբ մեր ընկերութիւնը, առաւօտեան վաղ, քաջարի տաճակահայ Խաչօի անդրջրճեղեղեան ձեի մակոյկով անկահայ Ախուրեանի աջ ափից դէպի ձախը, և նե ի հետաքարձրացաւ դէպի վեր, դէպի երանելի աւերակները...

Անին դատարկ չէր. նրա ընակչութեան մեծ մասը քաղաքումն էր. բացակայ էր միայն նրա ընակիչների մէկ քատորդ մասը:

Ո՞ւր էր զնացել այդ մասը, այդ առթիւ մենք կըխօսենք քիչ յետոյ. բայց ամենից առաջ ընթերցողը պիտի գիտենայ մի բան, մի տարօրինակ հակագիպութիւն. այն, որ մինչդեռ միւս քաղաքների ընակչութիւնը հեռանում է իրենց մշտական ընակավայրերից ամարային ամիսներին, գաղթելով այս ու այն ամարանոցները, այս երանելի քաղաքում ընակչութիւնը հեռանում է ձմեռը և հաւաքւում է բացառապէս ամառը, գարնանային շոք ամիսներին:

Եւ ահա չնորհիւ այս հանգամանքի, մենք Անիսում գտանք նրա ընակչութեան մեծ մասը, ինչպէս տսացինք քիչ առաջ:

Սակայն ովքե՞ր են Անիի բնակիչներն և լինչ բնակչութեան մասին է մեր խօսքը:

Քանի երրորդ տարին է արգէն, որ Անին ունի իր բնակչութիւնը: Հոյակապ քաղաքի բնակիչների թիւն առայժմ չորս է... չորս հոգի բնակիչներ, որ չորս հարիւր հազարների է հաւասար...

Այն, Անիի մշտական բնակիչներ կոչւելու քաղաքացիական իրաւունքը վաղուց են ձեռք բերել պղոփհսոր Ն. Մառը, ճարտարապետ Թորոս Թորոմանեանը, գերասան Վոյցը և Միքայէլ վարդապետը: Եւ Անին, առանց այդ անձնաւորութիւնների և դատարկ է և ամայի:

Նրանցից ամեն մէկն իր դերն ունի աւերակ քաղաքում, ամեն մէկն ունի իր կոչումն ու պաշտօնը: Եւ խիստ է զգալի դասնում, երբ որսնող ու սովոր աչքը նրանցից մէկն ու մէկին չի գտնում այնտեղ:

Իսկ այս անգամ Անիում մենք չկտանք նրա բնակիչների խոշորագոյններից մէկին—պ. Թորոմանեանին, աւերակների այդ մոլեռանդ ու սիրաբորբոք սիրահարին, որոնց սիրով ու հմայքով այնշքան տանջւել ու երգել է նա անցեալներում:

Անիում չգիտէին նրա չգալու պատճառը, բայց ամեն մի քարի կտոր և ամեն մի հողակոյտ յիշեցնում էր իր սիրելի տարփաւորին, որի հետ իրենք խօսել են այնքան անգամ ընտանի ու հարազատ լեզով, և որի անբիծ հոգուն, այնքան անգամ ներ-

շնչել են անցիալ կեանքի բարոյական մեծութիւնն ու վեհութիւնը:

Ինչի՞ Անիում չէր պ, Թորոմանեանը, զուցէ տաղանդաւոր ճարտարապետը հակառակ իր կամքին ու ցանկութիւնն է հեռացել երանելի աւերակներից: Բայց չէ որ առանց նրանց, առանց այդ սքանչելի աւերակներին նրա օրերը պիտի անցնէին խիստ անմշիթար: Չէ որ լոյսի սիրահար այդ թիթեռի համար Անին այն կրակն էր, որի շուրջը պիտի թոթուար նա տուանց հանգստանալու, մինչեւ իր թեկրի այրելը...

Գուցէ այս մասին մեղ կոլատասիանէ ինքը. պ. ճարտարապետը... իսկ այս ամենի մէջ միակ փաստն այն է, որ Անիում չկար նա, որը զուցէ ամենից այն է, որ Անիում չկար նա, որը զուցէ ամենից ամենից յախուռն սիրով սիրում է այդ աւերակները և նրանց կառուցանող անցած ու գնացած սիրունգների յիշտատակը:

Երեկոյ էր երբ մենք մնաս բարե ասացինք հայրենի տակակներին:

Այդ ժամանակ կանգնած հայրենի բարձրունքների վերայ ես տեսայ թէ ինչպէս արեի վերջին ճառաղայթները մէկիկ-մէկիկ մարեցան երկնակամարի վերայ, դալկացան վերջալուսի վառ բոցերը և վարդապոյն ամպերը հալւեցան երկնքի անծայր տարածութեան մէջ:

Ո՛, ինչ հրաշալի էր հայրենի երկնքը... Ես սկսեցի թափառել՝ այդ գեղատեսիլ բարձրունքների վերայ ինչպէս լեռնային մի փերի, որ ցերեկ ու գիշեր, ամեն մի բոյսի տակից, ամեն մի խոսովից ու

քարանձաւից ձայն է տալիս ու կանչում է իր գեղատեսիլ սիրուհուն, —յաւիտեան չքնաղ ու դեղեցիկ մայր բնութեանը...

Արևելքից մի մեղմ ու բարակ քամի անցնում էր ճոխ բուսականութեամբ ծածկւած լեռների վերայից և արձակում էր մի մեղմ սոսափիւն, մի անուշ մըմունջ ու հառաչ: Նա սահում ու անցնում էր այդ լուս ու անդորր տարածութեան վերայից ինչպէս մի սիրային երգի բէկրէկւած մըմունջներ, որոնք իրանց ցաւոտ ելեէջների մէջ այնքան խոր տանջանքներ ու վշտեր են ամփոփում:

Ես դէմքս դարձրի դէպի այդ զով քամին, դէպի այդ յաւիտենական աստանդականը, այդ սըգաւոր ողբերգուն, որի ցաւին չկայ վերջ, չկայ վաղճան:

Խոր շնչեցի լեռնային մաքուր օդը, այն օդը, որը չէր ապականւած կրքերի թոյներից, ատելութեան, չարութնան ու նախանձի սկ մըուրից...

Եւ ինչպէս քաղցր էր այն լեռնային քամու անուշ շոյումը, նրա ցուրտ համբոյըն ու գգւանքները, որոնք զովացնելով ինձ, հեռու վանեցին իմ սրտից ցաւոտ ու մոայլ մտքերը:

Վաղուց է, որ իմ ճակատի վերայից չես անցել ով զով քամի, շշնջացի ես, դու, որ աւերակների մշտական այցելուն ես, ծաղիկների սիրահարը, ամպերի խորհրդատուն և աստղերի սրտակիցը... Եւ ինչպէս ես հասկանում եմ քո լեզուն իմ բաղդակից աստանդական, ես որ լսել եմ քո հառաչանքը խոր

ձորերի քարանձաւներում քո լացը՝ հայրենի աւելակների սկ խոռոջների մէջ և քեզ նման հպարտ ասւանել եմ հայրենի բարձրաբերձ լեռների գասաւանել այնաեղու...

Երկնքի վերայ հալւեցան արեկի վերջին շողքերը և մութը սկսեց կամաց-կամաց իր սկ վերաբերներ տարածել երկրի վերայ:

Այդ ժամանակ քամին սկսեց անցնել աւելի ուժագին, նրա սառն շնչի մէջ ևս լսեցի մի արտասովոր հեկեկանք, մի անօրինակ զանգատ, որ նա լսելի էր դարձնում թաւշեղարդ լեռներին ու բլուրներին ով գիտէ, որքան զարերից ի վեր... իսկ այն քամու վիշտն հասկանալու համար պէտք էր նրա քրջապատի ցաւն խմանալ, այդ խաղաղ ու լոիկ վայրի մեծ ցաւը...

Այնտեղ, մի չոր ու ամայի բլրի լանջի վերայ հանգչում էր հայ զիւղը իր խղճուկ ու ողորմելի խուղերով, որոնք իրանց աղքատիկ զրութեամբ մեղյիշեցնում էին նախնական զարերը և քաղաքակըրյացիցնում էին նախնական զուրկ մարդուն:

Թութիւնից ու գիտութիւնից զուրկ մարդուն ծիշտ այս օրինակ դիւղեր էր տեսել յոյն պատմարան Քսէնոֆոնտը հայկական աշխարհում, մօտ երկու հազար տարի սրանից առաջ:

Եւ հայ մարդը, քսան երկար ու ձիդ դարերի ընթացքում չէ առաջադիմել և չէ ընթացել ժամանակի հետ դէպի առաջ, ի՞նչ սոսկալի ճակատագիր:

Սակայն ինչո՞ւ...

Նա, ով ուզում է լսել այս հարցի պատասխանը, նա թող իր հայեացքը գարձնէ դէպի հիւսիս, դէպի այն սպաւոր աւերակները, որոնք գիշերային ուրեականների նման կանգնած են խոհուն ու գլխակոր...

Դարերի ընթացքում, անծայր աշխարհի խորքերում գնացին ու կորան այն փառահեղ քաղաքի քաղաքակիրթ տէրերը, իրանց հետ տաճնելով երկրի քաղաքակրթութիւնն ու լրյուր նրանց յետևից այդ վայրերում հանգաւ կեանքը և այդ փառահեղ տևերակների կշտին առաջ եկաւ մի նորը իր նախնական գրութեամբ: Երկրի տէրերը հազիւ էին ծաղկել ու բարձրացել քաղաքակրթութեան առաջին աստիճանները, երբ վրայ հասան նոր աւերներ, նոր կործանարար պատուհամներ: Ու այսպէս անվերջ:

Եւ այն ժամանակ, երբ ես պատկերացնում էի իմ առջև անցած ու գնացած ժամանակների կեանքը, երբ իմ երևակայութեան ամբողջ թափով խորասուզում էի դարերի խորքը և ըմբռնում էի անցած կեանքի քաղաքակրթական մեծութիւնը, յանկարծ իմ ականջին հասաւ գիւղի արևելեան կողմում գտնւած բլրի գագաթից մի մեղմ ու անուշ մրմռնչ, որն ընդհատում էր մերթ ընդ մերթ քամու հակառակ հոսանքների հետ:

Երբ քամին սկսեց անցնել աւելի ուժգին և ձայներն սկսեցին հսչւել ու հասնել ինձ աւելի որոշ ու երկար, ես լսեցի հայ գեղջկուհիների երդը, որ հեռաւոր բլրի գագաթից քամին բերում ու հասցնում էր ինձ:

Ո՛, ինչքան մելամաղձոտ և տխուր էին այդ մրմռնջները, տխուր ինչպէս այդ ժողովրդի ճակատագիրը, մելամաղձոտ, ինչպէս այն աւերակ քաղաքի մէջ հեկեկող քամին:

Ի՞նչ մի առանձին վեհութիւն կար այդ գեղջկական մրմռնջների մէջ, որ այդքան ուժգին կերպով գերեց ու համակեց իմ ամբողջ էռութիւնը:

Ի՞նչի համար ես այդ վայրկեանին թողի անցեալի խոհները, մոռացայ թափառիկ քամիների հեծեծանուքը և վերջալոյսի ճառագայթների երերուն ցոլքերը, որոնք այնքան յոյզեր ու յիշողութիւններ ունեին զարթեցնելու իմ հոգու մէջ...

Հայրենի բարձունքների վերայ իմ հարազատ ժողովրդի երդն էի լսում ես, անպաճոյն ու մելամաղձոտ երդը, որի ամեն մի եկեղի մէջ մի խոր թախիծ, և վշտի հեկեկանք կար թագնւած:

Երկար դարեր է ապրել այդ ժողովուրդը այս բարձունքների վերայ և սակայն նա միշտ ու ամեն ժամանակ այդպէս տխուր ու մելամաղձոտ է երդեւ այդպիսի գառն հեծեծանքներ է արձակել...

Անողնք ճակատագիրը, ինչի դու այդքան անգութ ու չար էիր դէպի այս խեղճ ժողովուրդը, և ինչի դու սրան դարձրիր դարերի անբաւ մեղքերի քաւութեան ողջակեղը...

Դարերի ընթացքում իմ հարազատ ժողովրդի գլխին թափւած ոճիրների սկ թոյնը այսօր էլ դեռ

ևս ժանդուած է պահում նրա որոնող սիրտը և յոյզվով լի հոգին...

Եւ Ե՞րբ պիտի մաքրւի այդ սև ժանդը...
Ո՞վ գիտէ... *)

«Սուրենադակ» № 380 | 1911 թ.



*) Այս յօդւածը տպագրւում է փոքրիկ յաւելում
ներով։

Պ. Մ.



ՑԱՆԿ

b p b v.

Աւել սկսերի մէջ	5
«Աշոտ Ողորմած թագաւոր Հայոց»	24
Զւարթնոց եկեղեցին և Արտաշատի աւերակները	39
Մէկ օր Անիում	52



ՀՀ Ազգային գրադարան



NL0350698

22244

ՄԵՐ ՑԳԵԼԻՇՆ Հ ԾՈՒՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

1. ԲԱՆԱՍՏԵՂՄՈՒԹԻՒՆՆԵՐ Ա	25 կ.
2. ՎՃՏԻ ԱՂՅԵԽԻՐԾ (մինիատիւր հր.)	5 *
3. ՏԻԶԲՈՒՐ ԿԱԼԱՆԱԽՈՐԾ	15 *
4. ԱՐՏԻ ՎԵՐՔՈՒՐԾ	10 *
5. ՄԱՄԻԿՈՒՆԱՅ ԱՐՏԻՇՈՒՐԾ	20 *
6. ՀԱՅՐԵՆԻՐ ԱԵՐԱԱԿՆԵՐԾ	20 *

Դաճառում է Թիֆլիսի և գաւառական քաղաք-
ների ցըտվաճառանոցներում և Ազգայինդրապոլ հե-
ղինակի ձուր

